

9347

Պրոլետարներ բայց  
յերկրների, միացե՛ք

ԳՐ

ՌՈՒԲԵՆ

# ԲԱԳՎԻ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻՆ-

ՈՐԻՆԱԿԵԼԻ  
ԲԱԳՎԻ ԽՈՇՀՈՒՐԴ

ՅԱՊ5  
Դ-81

25 SEP 2006

Հայոց բարեկարգության պալատի վեհականության միացքի

III. 1024/3

1 DEC 2009

ՅԿԴՏ

Հ-81

ՈՈՒԲԵՆ

ԲԱԳՎԻ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆԻՆ—  
ՈՐԻՆԱԿԵԼԻ  
ԲԱԳՎԻ ԽՈՐՀՈՒՐԴ



ԱԶԵՐՆԵՇՐ—1933

24 JUL 2013

9347

## ԲԱԳՎԻ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻՆ— ՈՐԻՆԱԿԵԼԻ ԲԱԳԽՈՐՃՈՒՐԴ\*)

Ընկերներ, մեզ մոտ առաջին անգամն ե, վոր կայա-  
նում ե Բագխորհղի պլենումը, կուսակցության Բագվի  
կոմիտեի պլենումի հետ միասին։ Մենք դրան բացառիկ  
կարեոր նշանակություն ենք տալիս, ի նկատի ունենալով  
այն հանգամանքը, վոր անհրաժեշտ ե Բագխորհղի աշխա-  
տանքը դնել ավելի բարձր աստիճանի վրա, քան յեղել և  
մինչև այժմ։

Թե Բագու քաղաքում, թե Աղբբեջանում, ինչպես և  
ամբողջ մեր խորհրդային յերկրում մենք ունենք ահազին  
նվաճումներ։ Զիա մի ակտիվ բանվոր, վորը կոնկրետ կեր-  
պով չիմանա այդ նվաճումների մասին։ Վերջապես և մեր  
յերկրի բազմամիլիոն աշխատավոր մասսան գիտե, թե  
ինչպես և ինչ գժվարություններով են ձեռք բերվում  
այդ հաղթություններն ու նվաճումները։

Ընկերներ, այդ հաղթությունները ձեռք են բերվել և  
ձեռք են բերվում շնորհիվ այն բանի, վոր մենք, կուսակ-  
ցությունը, այնպիսի զեկավարություն ունենք, վորը յեր-  
կրն ու բանվոր դասակարգը տանում ե մի հաղթանակից  
գեպի մյուսը։ Մենք այդ հաղթությունները ձեռք ենք  
բերել և ձեռք ենք բերում նրա համար, վոր բանվոր դա-  
սակարգի, պրոլետարական հեղափոխության շտաբին դուք  
ե կանգնած այնպիսի կենտրոնական կոմիտե, վորը կու-  
սակցության գծի համար մզվող պայքարում կարողացել է  
հաղթահարել բոլոր գժվարությունները, մեր հաղթական  
ճանապարհից սրբելով թշնամիներին, կարողացել ե հար-  
վածել ու ջախջախել այդ թշնամիներին։

Յես այդ բանն ասում եմ նրա համար, վոր Բագխոր-  
հղի աշխատանքն անյերևակայելի։ Ե այն քաղաքական

\*) Բագխորհղի և Աղբեյոմիքումի (թ) Բագվի կոմիտեի պլենումում 1933 թվ  
մարտի 17-ի արտասանած ճառից։



42917-63

կոնկրետ խնդիրներից դուրս, վորոնք կանգնած են մեր խորհրդային յերկրի առաջ:

Մենք կարողացել ենք հաղթություններ տանել և կը-  
տանենք շնորհիվ այն բանի, վոր մեր կուսակցության  
գլուխ կանգնած ե պողպատե առաջնորդ ընկեր ՍՏԱԼԻ-  
ՆԻ (ծափահարություններ): Հետո, յերբ կխոսեմ խորհրդի  
պատգամավորների դերի մասին, կպատմեմ թե ինչպես  
քաղաքային տնտեսության համար մղվող պայքարի աս-  
պարիզում մենք որինակելի պատգամավոր ունենք հանձին  
ընկեր Ստալինի, վորովհետև Մոսկվա քաղաքում Մոսկվա-  
յի խորհրդի լավագույն պատգամավոր ե հանդիսանում  
ընկ. Սա ալի նը (ծափահարություններ):

Ընկ. Ստալինը, վոր ամեն որ կապված ե սոցիալիս-  
տական շինարարության հարցերի լուծման, համաշխար-  
հային պրոլետարական խնդիրների լուծման, բոլոր յերկըր-  
ների պրոլետարիատի պայքարի հետ, միաժամանակ մաս-  
նակցում ե քաղաքային տնտեսության շինարարության  
ամենակոնկրետ հարցերի լուծմանը, հարցեր, վորոնք ա-  
մեն որ բանվոր դասակարգի շահերն են շոշափում:

Ընկ. Ստալինը նախաձեռնել ե կենտրոնական կոմիտե-  
յի պլենումում գնելով քաղաքային տնտեսության խնդի-  
րը, վորից հետո, ինչպես հայտնի ե, քաղաքային տնտե-  
սության մասին կուսակցության կենտրոնական կոմիտեն  
ընդունել ե պատմական վորոշումը:

Մոսկվան լուսավորելու և տաքացնելու կոնկրետ հար-  
ցերը քնննելիս՝ ընկ. Ստալինն իր յելույթում ծափալել ե  
քաղաքային տնտեսության ամբողջ պրոբլեմը, ինչպես  
պետք ե այդ պրոբլեմը լուծվի մեր յերկըրում՝ սոցիալիզ-  
մի զարգացման տվյալ ետապում: Բանվորների պահանջ-  
ներին բավարարություն տալու կոնկրետ հարցերից նա  
քաղաքային տնտեսության հարցը սկզբունքային ե քաղա-  
քական մեծ բարձրության վրա ե դրել:

Ինչպես հայտնի ե, քաղաքային տնտեսության մասին  
կենտրոնական կոմիտեի վորոշումը վոչ միայն տնտեսու-  
թյան դրության պատկերն ե տվել, այլ և նշել ե այն ու-  
ղիները, վորոնցով արդ տնտեսությունը պետք ե ընթա-  
նա, վորպեսզի հավասարվի մեր յերկրի արտադրական ու-

ժերի ժամանակակից զարգացմանը, Խորհրդային Միու-  
թյան զարգացող, զորավոր բնդուստրիային ու կոլեկտի-  
վացմանը:

## ԲԱԳՎԻ ԳԱՂԱԲԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԴՆԵԼ ՆՈՐ ՅԵՎ ԲԱՐՁՐ ԱՍԻԴԱՆԻ ՎՐ

Կենտրոնական կոմիտեի այդ վորոշումից հետո՝ քա-  
ղաքային տնտեսության շինարարության գործում մեծ  
նվաճումներ ունենք, և ամենից առաջ Մոսկվայում: Նա,  
ով սրանից յերկու տարի առաջ ե յեղել Մոսկվայում, յե-  
թե այժմ գնա և նայի, Մոսկվան չի ճանաչվի: Այսանդ  
ահազին գործ ե կատարված: Ուրիշ քաղաքներում նույն-  
պես, յես կասեի և Բագվում, գոյություն ունեցող բոլոր  
թերություններով հանդերձ՝ քաղաքային տնտեսությունն  
իր զարգացման ավելի բարձր աստիճանն ե մտել:

Յես գտնում եմ, վոր Խորհրդային Միության  
բանվոր գասակարգի առաջավոր ջոկատներից  
մեկը՝ բագվի պրոլետարիատն արժանի ե, վոր  
իր քաղաքն որինակելի խորհրդայի ունենալիք առաջա-  
նարա քաղաքային տնտեսությունն որինակելի կերպով դըր-  
ված լինի: Յես գտնում եմ, վոր մեր խնդիրն այժմ նրա-  
նում ե կայանում, վոր մեր քաղաքային տնտեսության  
ասպարիզում յեղած աշխատանքի, մեր խորհրդի աշխա-  
տանքի մակարդակն ամենակարծ ժամանակիցում  
այնպիսի բարձրության վրա դնենք, վոր Բագվի պրոլե-  
տարիատն ունենա որինակելի նազու քաղաք: Խոկ դրան  
համելու համար, Բագվում մենք ունենք բոլոր պայման-  
ները: Խոսքն այն մասին ե, թե ինչպես գործնականում  
վերակառուցենք, վորպեսզի այդ խնդիրը լուծենք:

Վերցնենք մեր քաղաքային տնտեսության աշխատան-  
քի մակարդակը վոչ միայն մեղնում, այլ և ամբողջ յեր-  
կըրում: Դա մեզ մոտավորապես 1926-27 թվերի արդյու-  
նաբերության զարգացման մակարդակն ե հիշեցնում, այ-  
սինքն այն ժամանակաշրջանը, յերբ մեր արդյունաբերու-  
թյունը սոցիալիստական արմատական վերակառուցման ու-  
ղիներ մտել: 1925-27 թվերից հետո՝ մինչև 1933 թիվը մեր  
արդյունաբերությունը, ինչպես հայտնի ե, արդեն լուծել  
է ինդուստրիայի զարգացման պրոբլեմը: Յեվ ընկ. Ստա-

մեր, մեր կուսակցության կենտրոնը, մեր ամբողջ կուսակցությունն աջ ոպպորտունիզմի, կուսակցության բոլոր թշնամիների և թշնամական բոլոր հոսանքների դեմ մղած պայքարում, մեր յերկրում արտադրողական ուժերի այնպիսի մակարդակի են հասել, ֆաքիլաների և գործառանների այնպիսի քանակություն կառուցել (և վոչ միայն քանակի, այլ և վօրակի տեսակետից), փորոնք Խորհրդային Միությունն առաջ են քաշել առաջավոր ինդուստրիալ յերկրների շարքը: Կառուցվող սոցիալիզմի յերկիր Խորհրդային Միությունը փորոշ ճյուղերում հասնում և անցնում ե խորագույն ճգնաժամով համակված կապիտալիստական յերկրներից:

Իսկ քաղաքային տնտեսության ասպարիզում մենք մի ետապ ենք ապրում, վոր արդյունաբերության 1926-27 թիվս ե հիշեցնում, այսինքն, ուրիշ խոսքով՝ քաղաքային տնտեսության ասպարիզում մենք տնտեսության արմատական վերակառուցումն ենք ապրում: Դա վոչ թե նրանից ե առաջնում, վոր կուսակցությունն առաջներն ուշադրություն չի դարձրել քաղաքային տնտեսությանը: Բանը նրանում եր, վոր կուսակցության բոլոր ուժերը, յերկրի բոլոր ռեսուրսներն ուղղված են յեղել դեպի մեր ինդուստրիայի զարգացման, գյուղական տնտեսության զարգացման կողմը: Բոլորին հայտնի են Խորհրդային Միությունում կողեկտիվացման, գյուղական տնտեսության մեքենայացման նվաճումները: Կուսակցության հիմնական ուշադրությունն աշխատանքի հենց այդ կետերի վրա ե յեղել կենտրոնացված:

Սակայն 1929-30 թվերին մեր առաջ բոլորովին պարզ կերպով կանգնել ե արդյունաբերության աճման և քաղաքային տնտեսության միջև գոյություն ունեցող խզման պատկերը. իսկ քաղաքային տնտեսությունը—դա մի ինչ վոր ինքնապարփակ տնտեսություն չի, անկախ մեր ինդուստրիայի զարգացումից. քաղաքային տնտեսությունը չի կարելի անջատել հին և նոր ստեղծվող քաղաքներում արդյունաբերական պրոլետարիատի հսկայական կաղերի ուղանջներից:

Խնդիրը նրանում եր, վոր քաղաքային տնտեսությունը անտեսական, քաղաքական և կաղակերպման այնպիսի

մակարդակի վրա դրվեր, վոր այդ տնտեսությունը խոչընդունակ մեր յերկրի ինդուստրիայի հետագա զարգացման գործում:

Ինչ վերաբերվում ե այն ժամանակաշրջանի Բագվին, յերբ այստեղ կապվածալիստներն ելին տեր և տնորեն, նրա մակարդակը Ռուսաստանի շատ քաղաքներից ցած ե յեղելլ Մենք մի ահապին քայլ ենք արել դեպի առաջ, քայլ գամեննեին ել բավական չե. և խնդիրը նրանում ե, վոր կարողանանք այնպիս ձեռք զարկել քաղաքային տնտեսությանը այնպիսի խանդավառությամբ, այնպիս զարդացնենք մեր աշխատանքի տեմպերը, վոր Բագվի քաղաքային տնտեսության շինարարությունը հետ չմնար մեր բուռն կերպով աճող նավթային տնտեսությունից:

1933 թվի քաղաքային տնտեսության ծրագիրը, վորի մասին այստեղ զեկուցեց ընկեր Բալախանինը, հսկայական ծրագիր ե: Կատարելով այդ ծրագիրը, մենք անպայման մի աստիճան կրաքարանանք: Մեզ հարկավոր ե վոչ միայն այդ ծրագիրը կատարել, այլ և գործն այնպիս ապահովել, վոր Բագվորհրդի, կուսակցության Բագվի Կոմիտեյի ղեկավարությունը, Բագվորհրդի պատգամավորների ամբողջ մասսան որգանապիս ներգրավված լինեն այդ ծրագրի իրականացման գործում, վոր ծրագիրն իրագործվի, ինչ կերպ ել լինի: Այդ ծրագիրը հաջողությամբ իրականացնելու բոլոր պայմանները կան:

Յես, ընկերներ, դեռ բավականաչափ ծանոթ չեմ քաղաքային տնտեսության կոնկրետ հարցերին: Վերջին ժամանակներս Աղրկոմկուսի (բ) կենտրոնի ու Բագվի Կոմիտեյի առաջ մեծ խնդիր եր դրված—բարձրացնել նավթահանությունը: Ինչպիս գիտենք, 1932 թվին այդ գործում մենք խայտառակեցնենք. դրված ե յեղել և այժմ ել դըրված ե գարնանացանին պատրաստելու խնդիրը: Մեր ամբողջ ուշադրությունը դարձված ե յեղել այդ պրոբլեմների լուծման վրա: Ինչպիս գիտեք, նավթահանման համար մղվող պայքարում վորոշ արդյունքների հասել ենք: Բագվի պրոլետարիատն իր յեռանդուն աշխատանքով սկսել ե որեկան 8 հազար տոնն նավթ ավելի տալ յերկրին, քան տվել ե հունվարին, փետրվարի առաջին կեսին: Բագվորհուրդն իր աշխատանքում չպետք ե կտրված լինի նավ-

թային տնտեսության կոնկրետ խնդիրներից։ Բազմորհուրդը, նրա տնտեսությունը պետք է ոգնեն նավթային տնտեսության զարգացմանը, մյուս կողմից՝ Ազնեվթը, վորպես մի հսկայական տնտեսական կազմակերպություն, նույնպես պետք է իր ուժերը կենտրոնացնի այնպիսի կետում, վորպեսզի ողնի քաղաքային տնտեսության աճմանը։ Այդ յերկու կազմակերպությունների ուղիղ տնտեսական փոխարաբերությունը կարող է աճագին արդյունքներ տալ:

Մենք վորոշ հաջողություններ ենք ձեռք բերել։ Սակայն դրանով հանգստանալ վոչ մի գեպօւմ չի կարելի։ Ամենամեծ հանցագործությունը կիմներ, յեթե վորեվի չափով իջեցնենք նավթի համար մղվող պայքարի տեմպերը։ Մենք վոչ միայն պետք են ամբողջ հասակով դնենք գոյություն ունեցող Փոնդերի լավագույն շահագործման պրոբլեմը, նոր հորեր շահագործման մեջ դնենք, այլ և ամբողջ բարձրությամբ դնենք հորափորման պրոբլեմը, վորովհետեւ վերջիներջո այդ պրոբլեմը պետք է վճռի մեր ծրագրի հրագործման հարցը։ Այստեղ մենք գեռ աշխատանքի անսահման ասպարեզ ունենք։

Մեր առաջ գրված են յեղել և գրված են գարնանացանի նախապատրաստման խնդիրը։ Դուք գիտեք, վոր գյուղում մի շարք տնտեսական հարցերի վերաբերմամբ 1932 թվին վատ ենք աշխատել։ Մենք չենք կատարել բամբակի պլանը, չենք կատարել հացամթերման պլանը, քիչ բան ենք արել՝ կոլխոզների քաղաքական և կազմակերպչական ամրապնդման, կուլակության դեմ մղվող պայքարում, նրանց հետափոխական զգաստության բարձրացման համար։

Միթե Բագիսորհուրդը կարող է իրան համարել մի կազմակերպություն, վորն աշխատում է անկախ այն բանից, թե ինչպես են զարգանում Ազրբեջանի գյուղը։

Վոչ, ընկերներ, պետք է վոր Բագիսորհուրդը մեծապես մատակցի կովմուզային շարժման զարգացման և գյուղում տնտեսական-քաղաքական խնդիրների լուծման գործում։

Բագիսորհուրդն ինչպես են աշխատում գյուղի այն մասում, վորի տեղիտորիան անմիջականորեն իրեն են յենթարկված։ Յես այստեղ պետք են հրապարակորեն հայտարարեմ, վոր

բոլոր ՄՏԿ-ներից՝ տրակտորների ու գյուղատնտեսական ինվենտարի նորոգման գործում ամենից վատ աշխատում են կալա-Մաշտաղայի ՄՏԿ։ Դա խայտառակություն են, Դա ինչից են առաջանում։ Այն հասարակ պատճառով, վոր Բագիսի-այս հսկայական արդյունաբերական կենտրոնի—խորհուրդը թույլ ուշադրություն եղած գյուղական տնտեսության կոնկրետ խնդիրներին, մինչդեռ կալա-Մաշտաղայի ույոնը պետք է բանջարեղենի որինակելի բազա հանդիսանա բազու քաղաքի համար։

Այսպիսով, կուսակցության Բագիսի կոմիտեն չի կարողացել մեծ կոնկրետությամբ մոտենալ քաղաքային տընեսության հարցերին։ Խոստանում եմ, վոր Աղոկոմկուսի (բ) Բագիսի կոմիտեն յեռանդուն կերպով աշխատելու եղաղաքային տնտեսության ասպարհում, մեծագույն չափերով ոգտագործելով Մոսկվայի առաջավոր կազմակերպության փորձը։ Խոնդիրը նրանում են, վոր ամբողջ Բագիսորհության գործը։ Խոնդիրը նրանում են, վոր ամբողջ Բագիսորհության գործը։ Խոնդիրը նրանում են, վոր ամբողջ Բագիսորհության գործը։ 1933 թվի պլանի համար մղվող պայքարի այդ աշխատանքը զգալիորեն բարձր մակարդակի վրա դնել։

Թույլ տվեք ինձ կանգ առնել այն մի շարք ընդհանուր հարցերի վրա, վորոնք իմ կարծիքով, մեծ չափերով վորոշում են և պետք է վորոշեն մեր աշխատանքի հաջողությունը, 1933 թվի պլանի համար մղվող պայքարի հաջողությունը։

## ԲԱԳՈՒՆ ՊԵՏՔ Ե ՈՒՆԵՆԱ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻՄ

Ընկերներ, Բագիսորհրդի աշխատանքներում պետք են կունել նրանից, վոր նավթային արդյունաբերությունն այսուհետեւ հսկայական չափերով աճում ե Ազնեվթի՝ նավթաբերակամամսերի—Փութայի, Լոկ-Բատանի, կալայի, կարագուխուրի, և մյուս տեղերի, վոր անմիջականորեն Բագիսուխուրի, և մյուս տեղերի, վոր անմիջականորեն նշանակությունն վին են հարում, — արդյունաբերական նշանակությունն արդեն վորոշված ե։ Մեր առաջ գրված ե Բագու քաղաքի արդեն վորոշված ե։ Մեր առաջ գրված ե Բագու քաղաքի շատ լուրջ պրոբլեմ։ Զի կարելի խո ինքնահոսի ուղիով ավելի հեռու դնալ մի այնպիսի մեծ քանակական գործության գործում, ինչպիսին Բագուն ե։

Պրոբլեման հանգում են նրան, վոր արդեն ժամանակն ե, վոր մի քաղաք, վորը 600, կամ 700—800 հազարի քաղաք շինարարության գործում, ինչպիսին Բագուն ե։

պասպորտային սիստեմ ենք մտցնում, վորը կվորոշե, թե ինչքան բնակիչ կա Բազմում) ունենա իր գլխավոր հատակադիմք: Զի կարելի այլև մեղ գնալ ինքնահոսի գծով: Մենք պետք ե Բագվի բաղաքի պլանավորման հարցը դնենք: Դա խոշորագույն և վճռական հարց ե: Դա նշանակում ե նշել Բագվի սահմանները, թե նա ինչպես պետք ե զարգանա, ինչպես կառուցվի, ինչպես կփնան փողոցները ծայրամասերում, ինչպես կլուծվի ըլուակչության բնակեցման խնդիրը և այլն: Հսկայական կարեռություն ունեցող մի շարք այդ հարցերը հենց այժմ պետք ե սկսել լուծել, վորպեսզի մի քանի տարի հետո դժվար դրության մեջ ընկնենք:

Բանն այն ե, վոր կոնկրետ հարց դնենք հենց 1933 թվին Բագու քաղաքի ընդհանուր պլանի մասին: Այդ մասին պետք ունենալ Բագվորհրդի և Ադրկոմկուսի (թ) Բագկոմի հաստատուն փորոշումը: Այդ դժվարին խնդիր ե: Պետք ե ներդրավել գիտական ուժեր, ճարտարապետական լավագույն ուժեր թե տեղական և թե Խորհրդային Միության, ներդրավել տնտեսագետներ և այլն, մասնավորպես և Ազնեվթը, վորը պետք ե մասնակցություն ունենա այդ գործում:

## ԴՐՈՒԵՏԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱՎԱՅՐՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԳՐԱՎԵԼ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Ցերկորդ հարցը—այդ Բագվի խորհրդի աշխատանքի հարցն ե:

Բագվի խորհուրդը պրոլետարական դիկտատուրայի որգանն ե և միաժամանակ տնտեսական որգան, վորն ահազին տնտեսություն ունի մեծ բյուջեյով, հիմնական մեծ ներդրումներով: Բայց, արդյոք, Բագվի խորհուրդը վորեւ բանով տարբերվելում ե տնտեսական այլ կազմակերպություններից, որինակի համար, տրեստից: Տարբերվում ե:

Բագվի խորհուրդը վոչ միան տնտեսական կազմակերպություն ե, այլ և միաժամանակ հասարակական-

տնտեսական կազմակերպություն ե:

Արդյոք, կարող ենք մենք սկսել, վոր Բագվորհրդը նաև հասարակսկան - տնտեսական կազմակերպություն ե:

Յես այդ չեի սսել և խնդիրը նրանում ե, վոր Բագվորհրդին իր աշխատանքն այնպես կառուցվեր, վոր նա որինակելի խորհուրդ լիներ: Բագվու քաղաքի պրոլետարական դատարիան իրավունք ունի մեզնից պահանջելու, վոր Բագվի խորհուրդն ու որինակելի լինի:

Ի՞նչ ե նշանակում հասարակական - տնտեսական կազմակերպություն: Այդ նշանակում ե, վոր խորհուրդը վարում ե իր տնտեսությունը, լուծում ե կոնկրետ հարցերը, որգանապես հենվելով պրոլետարական հասարակայնության վրա, պատգամավորների վրա: Այդ նշանակում ե, քաղաքային տնտեսության մեջ չեն կարող այնպիսի հարցեր լինել, վորոնց մեջ ակտիվ կերպով չմասնակցելին խորհրդի պատգամավորները, սեկցիաները, գործարանների բանվորների կանայք:

Բանը նրանում ե, վոր Բագվորհրդի բոլոր ողակները, և ամբողջ խորհուրդն ընդհանրապես, դրա հետ միասին վերցրած և կուսակցության Բագվի կոմիտեն յուրացնեն այդ հիմնական ճշմարտությունը և վոր մենք ամենորյա աշխատանքում քայլ առ քայլ ձեռք բերենք այնպիսի դրուաշխատանքում կուսակցությունը կոնկրետ պրոլետարական ամբողջ հաթյուն, վոր Բագվու քաղաքի պրոլետարական սարակությունը կոնկրետ կերպով գրավվի քաղաքային տնտեսության շինարարության մեջ, այդ տնտեսության բոլոր վճռական հարցերի քննարկման ու լուծման մեջ:

Հարցը միայն նրանում չի, վոր պատգամավորները, սեկցիաներ հավաքենք և նիստ ունենանք: Այդ քիչ ե: Պետք ե Բագվորհրդի ամբողջ աշխատանքը հենց սիստեմը կազմակերպել և այնպիս վերակազմել, վոր այդ սիստեմն որգանապես ներգրավվի պրոլետարական հասարակական դատարիան իր ունը, քաղաքային տնտեսության կոնկրետ շինարարությունը:

Այս առաջին վճռական հարցն ե, վորի վրա պետք ե ուշադրություն դարձնել:

Հետեւյալ հարցը: Խնդիրը նրանում ե, վոր քաղաքական ակտիվ կյանքի, Բագվորհրդի որդանական աշխատական կազմակերպություն կազմակերպություն աշխատանքին կանչվեն քաղաքի աշխատավոր բնակչության այն խավերը, վորոնք

մեր տեսողության հորիզոնում չեն: Վոր Փաբր-  
ըիկաները, գործարանները ու նավթահանքերը պետք ե  
ակտիվ կերպով մասնակցեն Բագխորհրդի աշխատանքին,  
այդ ինքն ըստ ինքյան հասկանալի են: Թեև պետք ե ասել  
վոր նրանք ել քաղաքային տնտեսության աշխատանքում  
փոքր ակտիվություն են ցույց տալիս:

Որինակ Մոսկվայում այս ինչ փողոցի վրա, այս ինչ  
գործարանը կամ այս ինչ ֆաբրիկան շեֆություն են  
վերցնում, և այս գործարանի բանվորները հոգ են տա-  
նում վորապեսզի տվյալ փողոցում մաքրություն, կարգ ու  
կանոն լինի, միլիցիային ոգնում են հասարակական ծառա-  
յություն կատարելու և այլն: Շեքություն են վերցրել  
կոնկրետ հրապարակի, փողոցի վրա: Դործարանները,  
ձեռնարկներն որգանապես մասնակցում են քաղաքային  
տնտեսության աշխատանքին: Դրանով են զբաղվում և  
ղեկավար գործիչների կազմերը: Մոսկվան մարդկանց  
սնապիր աշխատանքի ե վարժեցրել: Յես որինակ կազմա-  
կերպիչ եի Արբատի հրապարակի ու Արբատի փողոցի  
հողամասի նկատմամբ: Այդ հողամասի վրա աշխատում  
եի կոնկրետ կերպով: Ման եինք գալիս տնից տուն, կար-  
գի եինք բերում հրապարակը, վիտրինաները: Այժմ Ար-  
բատի հրապարակով ու փողոցով անցնելիս՝ դուրեկան ե  
նայել: Յես այդ նրա համար եմ ասում, վոր քաղաքային  
տնտեսության նկատմամբ հաջող աշխատանք միայն այն  
ժամանակ կլինի, յերբ բոլորը ղեկավար գործիչներից  
սկսած մինչև տնային բանվորը ակտիվ կերպով աշխա-  
տեն քաղաքային տնտեսության մեջ: Յես այլ ևս այն մա-  
սին չեմ ասում, վոր աշխատանքի մեջ ամենակտիվ են-  
տուզիստը, վորից մենք սովորում և սեադիր ոպերատիվ  
աշխատանքի որինակ եյինք վերցնում — ենտկոմի ու  
Մոսկվայի կոմիտեի քարտուղար ընկ. Կազմանովիչն եր:

Ելի մի բնորոշ որինակ կը երեմ: Յերբ որակարգում  
դրվեց կոլխոզային առեստի հարցը, ընկ. Կազմանովիչը  
գնաց տեղ ու տեղը ծանոթանալու Մոսկվայի շուկաների  
դրության հետ և այդ շուկաներում տղեղ յերեկույթներ  
տեսավ: Տեղ-տեղ ինչ վոր կոյուղի եր և վոչ շուկա: Ընկ.  
Կազմանովիչը ինդիր դրեց — յերկամսյա ժամկետում Մոսկ-  
վայում ունենալ որինակելի շուկաներ: Յեվ վորակեսզի

այդ ընդհանուր խոսք չինի, առաջարկեց ղեկավար գոր-  
ծիչներին Մոսկովմի, Մոսքաղկոմի քարտուղարներին, խոր-  
հըրդի նախագահին և այլոց կարգի բերել շուկաները և  
այդ անձամբ կատարել:

Մոսկվայի խորհրդի նախագահ ընկ. Բուլգանինը  
պետք ե որինակելի դարձներ Արբատի շուկան, յես կար-  
պի պետք ե բերել Զացեպի շուկան և այլն: Մի յերկու  
ամսից մեզ պետք ե ստուգեին. մենք վոչ մի ոբյեկտիվ  
պատճառի վրա չպետք ե հենվելինք:

Հրավիրում եմ ձեզ գնալ և տեսնել Մոսկվա քաղաքի  
շուկաները: Այնտեղ դուք կտեսնեք որինակելի ծածկված  
կամ բաց շուկաները: Այդ բանը ձեռք բերինք նրա համար,  
կամ բաց շուկաները առվորեցրին զբաղվել սեադիր աշխա-  
տանքով: Յեկեք ընկերներ հաշվի առնենք այդ փորձը և  
զբաղվենք սեադիր աշխատանքով: Վոչ միայն և ընդհան-  
րապես ղեկավարել քաղաքային տնտեսությունը, վոչ մի-  
այն բանաձեռն գրել, յեկեք բոլորս սկսած Բագկոմի քար-  
տուղարից և վերջացրած խորհրդի ամեն մի պատզամա-  
գրով՝ զբաղվենք ամենորյա ոպերատիվ սեադիր աշխա-  
տանքով, այն ժամանակ գործն ավելի լավ կլինի (ձայ-  
ներ — ճիշտ ե. — ծափահարություններ):

Այսպիսով խոսքը վոչ միայն այն մասին ե, վոր մենք  
բոլոր այստեղ նստածներս պետք ե քաղաքային շինա-  
բարության ակտիվ մասնակիցներ լինենք, խոսքը վոչ մի-  
այն այն մասին ե, վոր ձեռնարկները, նավթահանքերը,  
գործարանները, ֆաբրիկաները պետք ե որդանական մաս  
նակիցները լինեն տնտեսության, նրանք պետք ե շեփու-  
թյուն անեն և կոնկրետ կերպով աշխատեն քաղաքային  
տնտեսության ամեն մի ոբյեկտիվ վրա:

Բանը նրանում ե, վոր քաղաքական ակտիվ կյանքի  
հրավիրենք քաղաքային աշխատավոր բնակչության և այն  
հավերելը, վորոնք շատ հաճախ մեր տեսողության որի-  
խավերը, վորոնք շատ հաճախ մեր տեսողության որի-  
զոնում չեն ընկնում: Խոսքը տնային բանվորների, այս-  
ինքն դռնապանների, տների կառավարիչների, տանտի-  
ինքն դռնապանների, մասին ե և այլն: Հարց դրեք վորենք բոլշևիկի  
ըուհիների մասին ե և այլն բոլց վորենք բոլշևիկի  
առաջ, վոր նա պետք ե աշխատի տնային բանվորների  
համարի: Յեվ նա նույն իսկ այդ վիրավորական կիամարի: Յեվ  
միթե տնային բանվորները փոքր դեր են խաղում քաղա-

Պետք ե կարողանալ նրանց գրավել ակտիվ քաղաքա-  
կան կյանքի, կարողանալ գտնել նրանց ուժերի գործա-  
դրման կետը քաղաքային տնտեսության համար տարվող  
պայքարում:

Միթե անտիրուհիները մաքրության համար տարվող  
պայքարում, կարգ ու կանոնի համար, այն բանի համար,  
վորպեսզի հերթեր չլինեն, բանվորների կանայք—տանտի-  
րուհիները քիչ բան կարող են տալ: Շատ ու շատ բան  
կարող են տալ: Դուք կարող եք նստել զրասենյակում և  
վերացական կերպով գտնել՝ ինչու հացի հերթեր են գո-  
յանում: Կանչեցեք տանտիրուհուն, բանվորի կնոջը, նա  
քեզ ամեն ինչ կպատմի—ինչու հացի հերթեր են գոյա-  
նում, ով և վորտեղ ե մեղափոր այդ գործում: Տանտի-  
րուհու հետ ունեցած հասարակ զրույցից կարելի ե շատ  
կոնկրետ, կենսական նյութեր ստանալ և ընդհանրացներ:  
Նրանց պիտի գրավել այդ գործի մեջ: Այդպիսով ինդիքը  
կայանում ե նրանում, վոր կարողանանք տանտիրություն  
անել քաղաքում: Կարողանանք աշխատանքի մեջ գրավել  
աշխատափոր բնակչության այն խափերին, վորոնք անմի-  
ջապես գործ ունեն քաղաքային տնտեսության հետ:

Յես հետեւ եմ մի բեռնատար ավտոյի աշխատանքին,  
վորն աղբ եր կրում: Մենք ընկ. Բալախնինի հետ մտա-  
ծում ենք, վոր յեթե մենք շատ բեռնատար ավտոներ ու-  
նենայինք, քաղաքն ավելի մաքուր կիներ, շատ աղբ դուրս  
կլրեինք: Այդ հասկանալի ե. սակայն գնում ես քաղաքով  
և տեսնում ես, գնում ե բեռնատարն աղբով լցած: Քա-  
մին փչում ե և այս ու այն կողմը սփռում ե աղբը: Խեղ-  
ճը յենթադրում ե, թե աղբ ե կրում, սակայն գնում ե և  
աղբն ամբողջ քաղաքի բոլոր կենտրոնական փողոցներում  
սփռում (ծիծաղ): Ընկեր Բալախնին, յերբ քամի ե փչում  
հարկավոր ե, վոր աղբ կրող բեռնատարը ծածկված լինի,  
վորովհետև նա վոչ թե ոգնում ե քաղաքը մաքրելուն, այլ  
կերպի տարածող ե հանդիսանում (ծիծաղ, ծափահարու-  
թյուններ):

Դուք, Բագիսորհրդի պատգամավորներ, յերբ տնից աշ-  
խատանքի եք գնում և յերբ աշխատանքից տուն եք վե-  
րադառնում, պետք ե նկատեք, պետք ե ցավեք քաղաքի

կարգ ու կանոնի համար, պետք ե հարցերը դնենք ոայ-  
խորհրդում և Բագիսորհրդում և համանեք գրանց լուծմանը:

Մեզ մոտ անկյուններում շատ միլիցիոներներ են դըր-  
վում, վորոնք շատ են իզուր տեղը սուլում (ծափահարու-  
թյուններ): Միլիցիոններները պետք ե կարգավորեն շար-  
ժումը: Յես մի քանի անգամ ասել եմ միլիցիայի պետին.  
—Դուք մի քանի փողոցներում այսպես եք դասավորել  
միլիցիոններներին, վոր շոփերները, վորոնք ըստ կանոնի,  
պիտի նրա շուրջը պտտեն ու անցնեն, ստիպում եք նը-  
րանց լինել փափեկան, փոկուսնիկ, վորպեսզի կարողանան  
այդ անել (ծիծաղ):

Պետք ե կոնկրետ կերպով ուսումնասիրել պայմաննե-  
րը: Ուրիշ գործ ե, յեթե դուք միլիցիոններին դնում եք  
հրապարակում և լայն փողոցների հատման տեղերում,  
ուրիշ բան ե յերբ փողոցները չափից գուրս նեղ են:

Զպետք ե ստիպել շոփերին փոկուսներ անել, վորով-  
հետև շոփերները բավականին փոկուսնիկներ են հենց  
իրենց աշխատանքում (ծիծաղ):

Անցնում ես քաղաքով, դիտում և տեսնում ես շատ  
տարրական անկարգություններ, վոր վերացնել կարելի ե,  
յեթե ուզում եք վոչ միայն Բագիսորհրդի, այլ նրա վորեն  
շարքային պատգամավորի միջամտությամբ:

ԲԱԼԱԽՆԻՆ. —Կաթը գեռ մեզ մոտ լավ են ծախում:

Յես չեմ իմանում թե կաթն ինչպես են ծախում, բայց  
ամեն որ տեսնում եմ, թե ինչպես են մեզ մոտ Բագ-  
իսում միաը և հացը մի տեղից մյուս տեղը փոխադրում:  
Տանում ե հացը և վոտքերով նստած ե այդ հացի վրա:  
Այնպես վոր ուզում ես կանգնեցել, վեր բերել և նըս-  
տեցնել: Մենք այս բոլորը տեսնում ենք, սակայն ինչու  
Բագիսի պատգամավորներ, ձեր ձայնը չի լսվում, ինչու  
պատգամավորները չեն պահանջում, վոր Բագիսորհուրդը  
ուել միջոցներ ձեռնարկի, վորպեսզի վերջ տրվի այդ  
խայտակություններին:

Բանը նրանում ե, վոր հենց մեր մեջ այդ բոլորը բը-  
թանում ե —տեսնում ես մեկ, յերկու անգամ ու սովո-  
րում ես. կրում են —կրում են, կեղտոտ—ե կեղտոտ ե:  
Միթե, շատ բան ե պահանջվում, վորպեսզի վերջ տրվի այդ  
խայտակություններին:



ղաքում լավ փոխադրեն, վորպեսզի այդ կուլտուրական ձևով արգի, վորպեսզի այդ վայել լինի այնպիսի մի պը-ռոլեարական կենտրոնի՝ ինչպիսին ե Բագուն:

Շատ բան չի պահանջում, ընկերներ. հարկավոր ե միայն ուշիմություն ու աշխատանք, կոնկրետ իմանալ գործը. հարկավոր ե, վորպեսզի քաղաքում իշխանություն լինի, վորպեսզի այդ իշխանությունն զգացվի: Յեթե տանում են հացը կամ միսը և մարդը նստած ե վոտքերով այդ հացի ու մսի վրա, վորպեսզի պատասխանատու լինի այդ բանի համար վոչ միայն նա, ով նստած ե, այլև նա, ով նրան ուղարկել ե: Պետք ե բանտարկել այդ գործի համար: Պետք ե այդ առթիվ հրաման հրատարակել:

**ԲԱԼԱԽՆԻՆԻՆ.**—Հրամաններ կան, սակայն դժբախտաբար դրանք չեն կատարում, սկսած պատասխանատու անձերից:

Ընկեր Բալախնին, յեթե մենք ձեզ հետ հրամաններ ենք գրում և դրանք չեն կատարվում և մենք անզոր ենք, ապա գրոշ չարժենք մենք (ձայներ,—ճիշտ ե.—ծափահարություններ):

Մենք պետք ե հասնենք այն բանին, վորպեսզի Բագիսորհրդի հրամանները կատարվեն առանց նկատի առնելու անձնավորությանը: Ցույց տվեք վորևէ բյուրոկրատի, զորը չի ուզում կատարել Բագիսորհրդի հրամանը, մենք նըրան հրապարակորեն կմտրակենք: Զե վոր ընկ. Բագիրովի հրամանով հրապարակորեն մտրակեցինք Քյուրզամիրի ու այդործնութիւն նախագահին, վորը քյալազյոզություն եր հայտնարերել բժշկի նկատմամբ նրա համար, վոր իբր թե նա վատ ե բժշկում պատասխանատու աշխատողներին:

Պետք ե պայքարել և այստեղ Բագվում, հիմարության դեմ մենք իշխանություն ունենք, սակայն մենք չենք կարողանում այն ոգտագործել: Այն մարդիկ, վորոնք ասում են, թե իրենց ձեռքին քիչ իշխանություն կա, ասում եմ, վոր իշխանությունը ձեր վոտքի տակ ե ընկած, կարողացեք այն վերցնել ձեր ձեռքը, ոգտագործել և կարդ ու կանոն սահմանել (ծափահարություններ):

Ընկերներ, քաղաքի սանիտարական դրությունն այնպես ե, վոր պիտի աղմուկ բարձրացնել և անհապաղ կոնկրետ գործի անցնել: Յես կարծում եմ, վոր Բագխոր-

հուրդը յեվ կրասակցության Բագկոմը կոնկրետ խնդիր կդնեն, վորպեսզի մեկ-յերկու ամսից հետո՝ աղաքը մահուր լինի, թե չե պատասխանատու ե լինելու առաջին հերթին Բագխորդուրդը. Բագխորհրդում մեզ մոտ լավ տեր ունենք, Բագխորհուրդը պիտի լուծի այդ խնդիրը:

Մենք առաջարկել ենք Բագխորհրդի նախագահի հատուկ տեղապահի պաշտոն սահմանել քաղաքի մաքրության և կարգ ու կանոնի համար և այդ տեղապահը պիտի ունենա մարտական, ոպերատիվ տեսչություն: Ով չի իմանում, վոր քաղաքի մաքրության հարցը—դա աշխատավորության առաջնային հարցն ե:

Մեզ մոտ Բագվում վերջին ժամանակներս մեծ անկարգություններ կան փողոցներում յերեխաների նկատմամբ: Հաճախակի են գարձել այն գեպեկը, յերբ յերեխաներն ընկնում են տրամվայի, ավտոմոբիլի տակ: Վերջին ժամանակներս թվերը սպառնական են: Մեր ուժը բավական չի վորպեսզի միայն վարչական կարգով կարգավորենք այդ գործը—թեկուղ և այդ իմաստով ել կարելի ե բացատրել կարգ ու կանոնի պակասությունը: Այստեղ հարկավոր ե հասարակական ուժերի մոբիլիզացիա: Արդյոք մենք աշխատանք ենք տանում դպրոցներում, վորպեսզի բացատրենք յերեխաներին, սովորեցնենք նրանց յերթեկելու կանոնները, բացատրական աշխատանք արդյոք տանում ենք ծնողների մեջ: Պետք ե լրջորեն մտածել, նշել կոնկրետ միջոցներ, վորպեսզի մոբիլիզացիայի յենթարկենք պլրոլետարական հասարակայնությունն այն խնդիրների լուծման շուրջը, վորոնք ամեն որ շոշափում են քաղաքի աշխատավորների շահերը: Բագխորհրդի յուրաքանչյուր պատգամավոր պետք ե իր ուժերը ներդրի պրոպագանդայի, աղիտացիայի մեջ, հասարակայնությունը կազմակերպելու պայքարելու համար այն չարիքի դեմ, վորն անդամալույթ ե դարձնում յերեխաներին:

### ԿԱՌՈՒՅԵԼՈՎ ՆՈՐԵՐԸ, ՊԱՀՊԱՆԵԼ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԻՆ ՏՆԵՐԸ

Հանդես յեկած ձառախոսներից մեկը նշեց, վոր չափը կայանում ե նրանում, վոր մենք ուշադրություն

չենք դարձնում յեղած բնակարանային գոնդին: Այդ ան-  
 վիճելի ճշմարտությունն եւ: Մենք շատ ժամանակ և նք  
 տրամադրում նոր շինարարու յանը: Բայց, ընկերներ,  
 պետք եւ նորը կառուցելով, մարտական խնդիր դնել բոլոր  
 դրություն դարձնել այն գոնդին, վոր ունենք մենք մեր  
 տրամադրության տակ: Տներ ենք կառուցում, սակայն չե՞  
 վոր չի կարելի բնակարանային պակասություն ունենա-  
 լով հույս դնել միայն այն տան վրա, վոր մենք պիտի  
 լով հույս դնել միայն այն տան վրա, վոր մեր պիտի  
 կառուցենք և չտեսնել այն, վոր մեր թթի տակ փլվում  
 են արդեն իսկ կառուցած աները: Պետք եւ մտածել այն  
 մասին, վորպեսզի պահպանվի այդ գոնդը: Պետք եւ լրջո-  
 րեն մտածել այն մասին, թե ինչպես կառուցել մեր աշ-  
 խատանքը, լորպեսզի վոչ միայն նոր շինարարությանն  
 ուշը դարձնվի, այլև այն բանի վրա, վոր մեր ունեցածը  
 պահպանվի: Յես կարծում եմ, վոր վճռական դիրեկտիվ-  
 պահպանվի: Յես պիտի տանք մենք Բագխորհրդին, դա  
 ներից մեկը վոր պիտի տանք մենք Բագխորհրդին, դա  
 այն դիրեկտիվ ե, վորպեսզի Բագխորհրդի բոլոր բաժին-  
 ները լրջորեն զբաղվեն այն գոնդի պահպանման հարցե-  
 րով, վոր ունենք մենք մեր տրամադրության տակ  
 ներկա մուենառում: Յես պնդում եմ, վոր այս խնդիրը ևս  
 չի կարելի լուծել առանց բնակչությանն այս գործի մեջ  
 գրավելու: Որինակ, յեթե բյուջետային միջոցները չեն  
 բարականանում աների վերանորոգման համար, թող բնա-  
 կիչները հավաքվեն, քննարկեն, նապատակային մուծում-  
 ներ մացնեն և Բագխորհրդի ու ուսախորհրդի ոգնությամբ  
 կատարեն տան գոնե տարրական վերանորոգումները: Պետք  
 եւ այս գործի մեջ գրավել և բնակչության միջոցները:  
 Մեր անտեսությունում հսկայական քանակությամբ մի-  
 ջոցնեն կան, վոր կարելի եւ ոգտագործել յեղած գոնդն  
 ավելի լավ շահագործելու համար: Մենք մի ժամանակ  
 Մոսկվայի գործարաններին առաջադրություն ենք տվել—  
 վինտրեցեք ձեզ մոտ և տվեք քաղաքային տնտեսությանն  
 այն, իսչ վոր ձեզ պետք չե: Քիչ բան չեն գտել: Դուք  
 կարծում եք, վոր քիչ բան կդանեք Բագվում: Պետք եւ  
 միայն աշխատել և կդանեք:

Պետք եւ Բագխորհրդին դիրեկտիվ տալ, վորպեսզի  
 1933թ. մեզ մոտ լինի խստագույն պետական, ֆինան-

սական և պլանային, դիսցիլինա: Մեզ մոտ շատ հաճախ  
 խորհրդային կոպեկը հաշվել չեն սիրում: Պետք եւ սովո-  
 րեցնել մեր տնտեսավարներին հաշվել կոպեկը, պետք եւ  
 պահանջել, վորպեսզի լինի խստ ֆինանսական, պետա-  
 կան, պլանային դիսցիլինա: Շատ հաճախ տնտեսավա-  
 րը հաշվի տալիս, ասում ե, վոր ինքը լիովին գործա-  
 դրել եւ հիմնական ներդրումների գումարները: հիմնական  
 ներդրումների գումարների գործադրումը—դա ցուցանիշ-  
 ներից մեկն եւ: Պետք եւ զնել ուշադիր կերպով, թե ինչ  
 և վորքան եւ կառուցված, վորքան արդյունավետ են կա-  
 տարված ծախսերը:

Յերբ ստուգում ես, դուրս եւ գալիս, վոր շատ քիչ եւ  
 արդյունքը: Կրկնում եմ, պետք եւ սովորեցնել մարդկանց  
 հաշվել կոպեկը, հարգել խորհրդային կոպեկը, կազմակեր-  
 պեկ գործն այնպես, վոր խստագույն ֆինանսական դիս-  
 ցիլինա լինի:

Վճռական հարցերից մեկը մարդկանց ընտրույան հար-  
 ցըն եւ հանդիսանում: Յես չեմ կրկնելու այն, ինչ, ասել  
 եմ կուսակցության Բագվի Կոմիտեի պլենումի անցյալ  
 նիստում: Յանկանում եմ ասել միայն մեր բաղաբային  
 և նետության միջին ողակի վասին:

Կեկավարելու արվեստը մեր ժամանակներում կայա-  
 նում ե վոչ միայն նրանում, վորպեսզի ճանաչենք և դասա  
 վորել կարողանանք զեկավար կազմերը (մենք այդ եւ չենք  
 կարողանում հաճախ լավ կատարել): Կեկավարության  
 արվեստը կայանում ե նրանում, վորպեսզի կարողանանք  
 նանաչել յեվ նիւս դասավորել միջին ողակը:

Պետք եւ իմանալ և ուսումնասիրել մարդկանց: Յերբ  
 խոսքը շինարարության մասին ե, մենք պետք եւ իմա-  
 նանք աշխատանքը կատարողների — պրորաբին, (աշխա-  
 տանքի զեկավար) ինչպես ընդունված ե նրանց ասել: Իսկ  
 քանի պրորաբ կա, մենք գիտենք ինչպես կարգն ե: Մենք  
 չենք ճանաչում կենդանի մարդկանց: Իսկ այդ միջին ո-  
 ղակին պիտի իմանալ, ուսումնասիրել և ոգ: Ել նրան աշ-  
 խատանքում: յեթե մենք ձեզ հետ միասին չիմանանք այդ  
 միջին ողակը, մեր անտեսությունը մենք յերբեք չենք  
 կարող կոնկրետ կերպով զեկավարել: Պետք եւ պահանջել  
 Բագխորհրդին նախագահից, վոր նա Բագվի քաղաքային

տնտեսությունում իմանա անձամբ մինիմում 200 - 300 հոգի միջին ողակից, բաժինների վարչությունը պետք է մարդկանց ավելի մեծ շրջաններ իմանան: Աղքածկուսի (բ) Բաղվի կոմիտեն ևս պետք է ճանաչի քաղաքային տընտեսության միջին ողակի հիմնական կաղըներին:

## ԱՎԵԼԻ ՄԵՇ ՈՒԾԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ

Հետեւյալ հարցը, դա բանվորների պահանջներին մեծ ուշադրություն ցուցաբերելու անհրաժեշտության հարցն ե: Յես պետք է ասեմ, վոր հաճախ բավական ուշադրությունը չի ցուցաբերվում: Միշտ չե, վոր Բագվառինին համառում ե այն, ինչ այսոր անհանգստացնում ե քանվորներին: Այդ գործում շատ մեղափոր են և խորհրդի պատգամավորները: Հարկավոր ե ավելի ուշադրություն, պես ե ավելի լավ լսել բանվորների պահանջները:

Քաղաքային տնտեսությունն այնպիսի տնտեսություն ե, վորն ամեն որ գործ ե ունենում հարյուր հազարավոր բանվորների և նրանց ընտանիքների շահերի հետ: Նա ապրում է տանը և յեթե տանն անկարգություն ե — դա քաղաքային տնտեսությանն ե վերաբերվում, յեթե արտաքնօցում ջուր չկա, յեթե ջրանցք՝ խողովակը փչացած ե, դա քաղաքային տնտեսությանն ե գերաբերվում: բանվորները փողոց են դուրս գալիս, փողոցը կեզտոտ ե — դա քաղաքային տնտեսության հարցն ե: տրամվայ, ելեքտրո գնացք են նստում — այնտեղ անկարգություն ե — դա քաղաքային անտեսության հարցերն են: Պառկելու և քնից զարթնելու մոմենտից մկան բանվորը և նրա ընտանիքն ամեն որ ընդհարվում են քաղաքային տնտեսության հարցերի հետ: Մենք մեր աշխատանքում միայն քաղաքային տնտեսության խոշոր պրոբլեմներով չպիտի զբաղվենք, այլ պետք է մանրությունների վրա ել ուշադրություն դարձնենք, այն մարմինների վրա, վորոնք հաճախ բանվորների համար շատ մեծ նշանակություն ունեն: Շատ հաճախ այն, ինչ մանրունք ե թվում, դատարկ բան, բանվորի կյանքում մեծ դեր ե խաղում:

Ոյախորհուրդները մեզ մոտ գեռ հեռու են այն առաջադրությունների կատարումից, վոր գրվում են նրանց

